



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



« 04 » 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000009

Ձեռնարկողը՝

«Օրդ Դեվելոփմենթ» ՍՊԸ
Ք. Երևան, Գրիբոյեդով 48

Գործունեությունը՝

Գրիբոյեդով փողոց 48, 48 փարածք և 48/4 հասցեներում
նախատեսվող բնակելի թաղամասի շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000009

‘ 04 ’ 02 2020թ.

**Գրիբոյեդով փողոց 48, 48 տարածք և 48/4 հասցեներում նախատեսվող
բնակելի թաղամասի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«Օրդ Դեվելոպմենթ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք է Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 09.12.2019թ. N01/18-07/4547-Ա նախագծման թույլտվության (ճարտարապետական հատակագծային առաջադրանքը, տրամադրված 5.363 հա տարածքով) հիման վրա:

Հողամասը գտնվում է Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով փողոց հ. 48, 48 տարածք և 48/4 հասցեներում: Շինարարական աշխատանքները իրականացվելու են 53263.0մ² մակերեսով տարածքի վրա: Նախագծով առաջարկվում է կառուցել բնակելի թաղամաս, որը բաղկացած է 23 մասնաշենքից, որոնց հարկայնությունը, ըստ նախագծման թույլտվության 9.3. կետի (շենքերի բարձրությունը ենթակա է փոփոխության կապված թաղամասի կառուցապատման խտության նորմերով ամրագրված ցուցանիշների), տատանվում է 12-ից մինչև 16-ը հարկայնության սահմաններում: Ըստ հատակագծային լուծման համալիրն իրենից ներկայացնում է 2 ներքին բակերի պարագծով կառուցապատում, որի յուրաքանչյուր մասնաշենք ունի առանձին շքամուտք:

Նկարագրական մաս. նկուղային հարկերը (-3.30 և -6.60 նիշերում) ամբողջովին զբաղեցնում է ավտոկայանատեղին, որի մուտքը կազմակերպված է հողամասի տարբեր նիշերից: 0.00 նիշում գտնվող առաջին հարկում ամբողջությամբ տեղակայված են հասարակական տարածքներ, որոնց մուտքերը կազմակերպված են ներթաղամասային փողոցների ողջ երկայնքով: Առաջին հարկի բակային հատվածում է գտնվում բնակելի շենքի հիմնական մուտքերն և էվակուացիոն ելքերը ավտոկայանատեղիից: Երկրորդից (+3 .60 նիշ) մինչև 16-րդ (+50.50 նիշ) հարկերում տեղակայված են 1, 2, 3 և 4 սենյականոց բնակարաններ՝ տրանսֆորմացվելու հնարավորությամբ:

Գլխավոր ճակատը լուծված է բնակելի բարձր հարկայնությամբ կառուցապատմանը հարիր ձևերով, երեսապատման և հարդարման որակյալ նյութերի (տիպ. բազալտ և տրավերտինե սալեր, բարձրորակ սվաղ և ապակե հարթություններ) օգտագործմամբ:



Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան: Բնակելի և հասարակական տարածքներում ապահովված են բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմանները:

Տանիքը հարթ է, նախատեսված է խարամի շերտ (ջերմամեկուսացման և թեքությունների ստացման համար), որի վրայից ջրամեկուսացում: Տանիքից կազմակերպված է ներքին ջրահեռացում:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողի ընդհանուր մակերես՝ 53263.0մ²,
- անջրանցիկ մակերես (ասֆալտապատում, ճեմուղի և այլ)՝ 16379.0մ²,
- կառուցապատման մակերես՝ 15020.0մ² (28.2%),
- կանաչապատման մակերես՝ 21864.0մ² (41.05%),
- ավտոկայանատեղիների քանակ՝ 1900,
- բնակարանների քանակ՝ 1800:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի, օգտագործման նպատակը՝ խառը կառուցապատում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից կամ բերովի ջրի հաշվին՝ ավտոցիստեռներով, ջրի մոտավոր պահանջարկը կկազմի մոտ 4920.0մ³/տարի:

Բակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին միանալով, իսկ ջեռուցումը նախատեսվում է գազով աշխատող ջրաջեռուցիչ կաթսաներով, որի գազամատակարարումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ ցանցին՝ լիցենզավորված կազմակերպությունների կողմից իրականացվող նախագծերի հիման վրա:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռնով: Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը կկազմի մոտ 31133.0մ³/շին.ժամ, իսկ կենցաղային պայմանները կապահովեն համաձայն տեխնիկական պայմանների:

Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից 27.03.2019թ. տրամադրված N 01/18-Մ-2652-16 և N01/18-Մ-2650-17 քանդման թույլտվությունների, տարածքում առկա պահեստը, ցանցն, եռակցման արտադրամասը և այլ շենք շինությունները արդեն իսկ քանդվել են, իսկ քանդման աշխատանքների ընթացքում առաջացող շինադբր տեղափոխվել է Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող՝ նախկին քարհանքի տարածքում գործող շինարարական թափոնների աղբավայր:

Բազմաբնակարան բնակելի շենքերի՝ ե/բ հիմքերի տեղադրման համար, կատարվելու է մոտ 270.0հազ.մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող հողային զանգվածի մի մասը՝ 36.0հազ.մ³ ծավալը, կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած մասը՝ որպես հետիցք,



ժամանակավոր կկուտակվի շինհրապարակում և կօգտագործվի տարածքի հարթեցման համար: Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Հիմնական թափոնատեսակը, դա կենցաղային աղբն է 176640.0կգ քանակով, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում (շինարարության 64 ամիսների ընթացքում) և կտեղափոխվի մոտակա աղբավայր: Շինարարական աղբն՝ ընդհանուր 2300.0մ³ ծավալով, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շահագործման փուլում կառուցապատված շենքերի նկուղային հարկերում կնախատեսվի համապատասխան տարածքներ՝ մոտավոր 1440.0տ/տարի քանակով, կենցաղային աղբի հավաքման և հեռացման համար, որի վերջնական տեղը կհստակեցվի օպերատորի հետ աղբահան մեքենաների տեսակը ճշտելուց հետո:

Մթնոլորտային տեղումների՝ անձրևների, ժամանակ շինարարական տարածքից առաջացող հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը նախատեսվում է տեղադրել շինարարական հրապարակին կից և իրենից ներկայացնում է պլաստմասե 25.0մ³ ծավալով տարողություն: Տարողության ծավալն ընտրվել է հաշվի առնելով իրականացվող շինարարական աշխատանքների ժամանակ միաժամանակ 500.0մ² մակերեսով տարածքից առաջացող ջրային հոսքերի քանակը: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, որի արդյունքում առաջացած պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը տարածքից կհեռացվի շինաղբի հետ համատեղ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են.

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով նախատեսված են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում: Մասնավորապես.

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում, տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական աշխատանքների ժամանակ շենքի ծածկում փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով,



- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը ուղորդում պարզարան և այլն:

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է նաև իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

3. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պատասխանատու է տնկված ծառերի աճի և խնամքի համար, իրականացվելու են աճի և կաչողականության զննումներ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասհանել 350.0հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 820000.0հազ. դրամ:

Պատճառաբանական մաս: Վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտի տեղեկատվությունը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, ինչպես նաև արտակարգ իրավիճակների նախարարության և քաղաքաշինության կոմիտեի կարծիքները, Երևանի քաղաքապետարանի հետ իրականացված հանրային քննարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները. նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն կարճատև և տեղային:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախնական գնահատման հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ հայտի՝ լուծված են կեղտաջրերի հավաքման և հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի, բարեկարգման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, խախտվող տարածքի սահմանափակ մակերեսը, մշակված բնապահպանական միջոցառումները և մշտադիտարկման իրականացման պլանը՝ կարելի է ենթադրել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա



պետք է ունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների պահանջներին և մշտադիտարկումների իրականացման պլանին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել օրվա սահմանված ժամին՝ բնակելի տարածքներում աղմուկի և առավելագույն բեռնվածությամբ աշխատանքային ժամերի ավելացումից խուսափելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Օրդ. Դեվելոպմենթ» ՍՊԸ կողմից ներկայացված Գրիբոյեդով փողոց 48, 48 տարածք և 48/4 հասցեներում նախատեսվող բնակելի թաղամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Կ. Մովսիսյան